Աղվանից աշխարհից ելավ, բազմությամբ եկավ Գեղամա գավառը: Իր հետ կապած ուներ հինգ աբեղա. մեկի անունը Միքայել էր, որ Քանաքեռ գյուղից էր, իսկ Հովհաննես անունով մի քահանա Կարբի գյուղաքաղաքից նրան հանդիպում է Գեղարքունիքում, նրա հետ գալիս է մինչև Կոտայք գավառը: Նրանք պատմեցին ինձ այս ամենը: Մեխավորը գալիս է Նորք գյուղը և այնտեղից նայում է Երևանի բերդին: Ձեռքերը տարածելով իբրև թռչուն շարժում էր: Հովհաննես քահանան ասում է՝ ի՞նչ ես անում, վարդապետ: Մեխավորն ասում է՝ կամենում եմ թռչել մինչև բերդը: Իսկ քահանան նրա ձեռքը բռնելով ասում է՝ կամենում ես խայտառակ լինել որպես նեռ: Ինչպե՞ս կարող ես թռչել, չէ՞ որ դու մարդ ես: Դադարիր այդ կախարդական գործիցդ, ազատիր նաև աբեղաներին, գուցե խանը լսի և քեզ չար մահով սպանի: Լսելով քահանայի խոսքը՝ ազատեց աբեղաներին և ուղղվեց դեպի բերդը:

Իսկ Ամիրգունա խանը բերդից ելած գնում էր զննության: Նայելով տեսավ բանակը, սարսափած հարցրեց՝ վահ, էս ինչ բանակ է: Պատասխանում են, թե նա մեխավոր հոր բանակն է, որի մասին պատմում էին: Խանը վերադարձավ, մտավ բերդը: Եկավ նաև մեխավորը: Նա ևս իր բազմությամբ մտավ բերդը, գնաց, կանգնեց խանի առջև: Այնտեղ խանի մոտ էր նաև Ավետիս կաթողիկոսը՝ երկու եպիսկոպոս նրա հետ: Խանը մեխավորին հարցրեց՝ ի՞նչ մարդ ես, որտեղի՞ց ես գալիս կամ ո՞ւր ես գնում: Մեխավորը պատասխանում է՝ սնագլուխ եմ, քո կյանքի համար աղոթող: Խանը ձեռքը մեկնելով դեպի կաթողիկոսը՝ ասաց, սրանք բավական են իբրև աղոթող ինձ համար, դու գնա, աղոթիր Դավութ խանի համար:

Խանը հարցնում է՝ ինչո՞ւ ես երեսդ ծածկել: Քանի որ վեղարի ծայրը կախված էր երեսին: Մեխավորը պատասխանում է՝ թե արժանի չեմ երկինքը տեսնելու: Խանը փայտի ծայրով, որ բռնել էր ձեռքը, բարձրացրեց քողը և տեսավ նրա երեսը: Քանի որ գարշելի էր, ասաց՝ անիծվի կերպարանքդ, աղտեղի կերպարանքիդ համար ես ծածկել, անարգ թշվառական, որպեսզի ոչ ոք չտեսնի քո դեմքը և հանցանքը գցում ես երկնքի վրա: Դարձյալ հարցնում է՝ ի՞նչ են այդ զինվորները, զորքով պատերազմ ես գնում Վա՞ն, թե՞ Կարին: Մեխավորը պատասխանում է՝ ոչ մի տեղ չեմ գնում, այլ ես քանզի ճշ-

մարտությունն եմ քարոզում, այդ պատճառով զորքը ինձ հետ շրջում է: Խանը ասում է՝ այժմ նաև քարոզիր սրանց, որոնք այստեղ են:

Նա ուներ ժողովածու մի գիրք, նրանով էր ասում, ինչ որ ասում էր: Բանալով գիրքը ասում է՝ սա գրված է սնագլուխների համար, որ քարոզում է, թե մի ստանաք ոչ ոսկի, ոչ արծաթ և այլն:

Այնտեղ էր մի գառնեցի, որ թողել էր աբեղայությունը և եղել էր զինվոր, սրա անունը Զաքար բեկ էր: Խանը սրան ասաց, թե դու թարգմանիր սրանց ասածները: Եվ ինչ որ մեխավորը ասաց, Զաքար բեկը նույնհետյան թարգմանեց: Խանը կաթողիկոսին ասաց՝ դու էլ քոնն ասա: Կաթողիկոսի մոտ կար մի ավետարան, որ կոչվում էր Զրահավոր:* Կաթողիկոսը բացեց այն տեղը, որտեղ ասված է. «Հանդես կգան սուտ Քրիստոս և սուտ մարգարեներ** և այլն: Նաև այն էլ, թե զգույշ եղեք նրանցից, որ գալիս են ձեզ մոտ ոչխարների հագուստով, բայց տակից հափշտակող գայլեր են»***: Զաքար բեկը այդ էլ թարգմանեց:

Ապա խանը ասաց՝ այս է ճշմարիտը, իսկ դու ավազակորդի (հարամզադա) ես: Այդ պատճառով ես հագել այդ հանդերձը, որպեսզի խաբես անմեղ քրիստոնյաներին: Եվ հրամայեց նրան գցել ջրավազանը և ջրում խեղդել: Եվ քանի նա գլուխը ջրից հանում էր, խանի սպասավորները կոխում էին ջուրը: Խանը հրամայեց կոդոպտել նրա տասներկուսին՝ մորե մերկացնելով: Երկու մահմեդականի և մի հայի նրա հեծյալներից կողոպտեց: Կաթողիկոսի աղերսանքով նրան ջրից հանին և նշանակեցին զինվորներ, որ Երևանի շրջաններից նրան հեռացնեն: Հանելով բերդից՝ նրան առան տարան Քանաքեռ, իսկ Քանաքեռի տգետ ռամիկները, երբ լսեցին նրա գալը, գրոհ տալով ելան նրան ընդառաջ: Մինչև անգամ տնարգել աղջիկները ևս գնացին այն կախարդին տեսնելու: Նրանք գալով իրենց երեսները քսում էին նրա հանդերձի քղանցքներին: Շատերը ողջագուրվելով էին ընդունում նրան: Մի այրի պառավ կար, որին Եղիայի կին էին կոչում, սնուցում էր կովի մի հորթ: Այդ պառավը ուր էլ գնար, հորթն էլ բազմության հետ գնում էր, սրանք գնում էին կախարդին տեսնելու, գնում էին նաև այն պառավը և հորթը, որին սնուցվել էր: Հորթը պոչը ցցած գոռալով գնում

* Մետաղյա պատյանով պատված:
** Մարկ., ԺԳ, էջ 22:
*** Մատթ., Է 15: